ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԴԻԱՆՆԱ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

ԴԱՇՏԱԴԵՄԻ 2011 Թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ
(նախնական հաղորդում)

Դաշտադեմի միջնադարյան ամրոցը գտնվում է Արագածոտնի մարզի Դաշտադեմ գյուղում (նախկին Ներքին Թալին), Թալին քաղաքից 5 կմ հարավ: Ամրոցը իշխող դիրք ունի Արարատյան դաշտավայրի նկատմամբ, սակայն ի տարբերություն միջնադարյան բերդ-ամրոցների, զուրկ է բնական անառիկությունից: Ամրոցի պաշտպանական համակարգը նրա բարձր պարսպապատերն են (նկ.1):

Դաշտադեմի ամրոցում տարբեր ժամանակներում եւ տարբեր հատվածներում կատարվել են հնագիտական եւ վերականգնողական աշխատանքներ: Այսպես, ՀՀ հուշարձանների պահպանության եւ օգտագործման գլխավոր վարչության կատարած վերականգնման աշխատանքների ծրագրով 1989-1990 թթ. ամրոցի տարածքում կատարվել են պեղումներ, որի արդյունքում բացվել են պարիսպների հյուսիսային հատվածը, միջնաբերդի եւ հյուսիսային պարսպի միջեւ եղած տարածքը[1]: 2005-2006 թթ. Պատմամշակութային հուշարձանների պահպանության եւ զբոսաշրջության զարգացման պետական ծրագրի շրջանակներում կատարվել են Դաշտադեմի ամրոցի ամրակայման եւ վերականգնման աշխատանքներ միջնաբերդի տարածքում: Հիշյալ ծրագրի շրջանակներում Իտալիայի՝ հայ մշակույթի ուսումնասիրության եւ վերականգնման կենտրոնի մասնակցությամբ պեղվել են Զաքարյանների պարսպի գլխավոր, կամարակապ մուտքի ներսի հատվածը եւ աշտարակները[2]:

Պետական ծրագրով 2011 թ. հոկտեմբերի 25-ին վերսկսվեցին Դաշտադեմի միջնադարյան ամրոցի պեղումները՝ Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի կողմից: Աշխատանքները կենտրոնացվեցին ամրոցի արեւմտյան եւ հարավ-արեւմտյան հատվածներում՝ միջնաբերդի եւ պարսպապատի միջեւ: Պեղման ենթակա ամբողջ տարածքը նախապես բաժանվեց 5x5 մ չափերի քառակուսիների, որոնցից յուրաքանչյուրը համարակալվեց արաբական թվով եւ լատինական այբուբենի տառերով (նկ. 2):

Նախորդ տարիներին այս հատվածում կատարված վերականգնման աշխատանքների արդյունքում կուտակված էր մեծ քանակությամբ շինարարական աղբ, որի հեռա-

1 Տեմ **Ե. Ասատրյան**, Դաշտադեմ ամրոցի 1989 -1990 թթ. պեղումների արդյունքները, ՀՀ-ում 1989-1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկ. թեզ., Երեւան, 1991, էջ 113-114:

2 Տեմ **Գ. Սարգսյան**, Դաշտադեմի ամրոցը. «Հայ արվեստ», Երեւան, 2007, հ. 3-4, էջ 35-37:

ցումով սկսվեցին աշխատանքները: Պեղվող տարածքի կենտրոնական մասը բավականին բարձր էր՝ ի տարբերություն միջնաբերդի եւ արեւմտյան պարսպապատի տակ բացված հատվածների: Այդ տարբերությունն առաջացել է այդ հատվածը տուֆով սալահատակելու արդյունքում, իսկ պարսպապատի եւ միջնաբերդի հիմքերը բացվել են վերականգնման նպատակով կատարված ստուգողական աշխատանքների միջոցին:

Շինարարական աղբի, թափված հողի ու քարի մաքրման ժամանակ հողի լիցքից շուրջ 2 մ խորությունից դուրս էին գալիս հիմնականում ԺԸ-ԺԶ. դարերին բնորոշ հասարակ եւ ջնարակած խեցանոթների բեկորներ:

Միջնաբերդի արեւմտյան պատի եւ սալապատ հրապարակի միջեւ ընկած տարածքում պեղումների միջոցին բացվել են միջնաբերդի հիմքերը, որոնք ամբողջությամբ դրված են տուֆե ժայռի վրա: Այս ամբողջ հատվածը լցված էր շինարարական եւ տնտեսական աղբով: D-4 քառակուսում բացվել են թոնիրի մնացորդներ. պահպանված մասի բարձրությունը 55 սմ է, պատերի հաստությունը՝ 7 սմ, տրամագիծը՝ 90 սմ: Թոնիրը տեղադրված էր ժայռի մեջ նախապես փորված շրջանաձեւ փոսում: Թոնրի հարավային մասում պահպանվել էր նաեւ թոնրի քարաշար ակը (նկ. 3):

Միջնաբերդի արեւմյան պատի հարակից հատվածում՝ ամբողջությամբ բացվեց ժայռը: Միջնաբերդի արեւմտյան՝ կիսակլոր աշտարակի մոտ՝ E-1 քառակուսում, մոտ 1,5 մ խորությամբ բացվեց կարաս՝ խաթարված վիճակում, որին տվեցինք N1 պայմանական համարակալումը: Անոթի կողքին բացվեցին 50 սմ տրամագծով, տուֆ քարերով շարված շրջանաձեւ օջախի մնացորդներ: Օջախի շրջանաձեւ պարագծի ոչ բոլոր քարերն են պահպանվել: Դատելով վերջինիս խորությունից եւ խեցեղենի նախնական թվագրումից՝ ԺԸ-ԺԳ. դարեր, ենթադրում ենք, որ օջախը ժամանակակից է միջնաբերդի պարիսպների կառուցմանը: Հիշյալ անոթը, օջախը եւ թոնիրն ամենայն հավանականությամբ համաժամանակյա են, քանզի նույն շերտից են գտնվել:

Բացված ժայռի որոշ հատվածներում հաճախ հանդիպում են կավով տոփանված հատվածներ, որով հավանաբար փորձ է արվել հարթեցնել տեղանքը՝ այն օգտագործելու նպատակով:

Պեղումներ կատարվեցին նաեւ պարսպի հարավ-արեւմտյան անկյունում՝ B-2-3 քառակուսիներում: Այս հատվածում պարսպի շարվածքի ներքին ճակատը գրեթե չէր երեւում: Կատարված աշխատանքների արդյունքում պարզ ուրվագծվեց պարսպապատի շարվածքը, որի որոշ քարեր, սակայն, չէին պահպանվել: Միաժամանակ բացվում էր տուֆե սալահատակը: Աշխատանքներ իրականացվեցին նաեւ պարսպի հարավային՝ կիսակլոր աշտարակին կից՝ C-5, C-6 քառակուսիներում: Այս հատվածում հյուսիս-հարավ ուղղությամբ թողեցինք 1 մ լայնությամբ հողե շերտապատ: Այստեղ եւս մշակութային շերտը խաթարված էր:

Արեւմտյան պարսպապատին կից կատարված պեղումներով բացվեց երկու հնձանի հոր: Սրանք նախկինում պեղվել են, այդ է վկայում հորերի կոնսերվացված լինելը (ծածկված էին պոլիեթիլենային կտորով եւ լցված մանր խճով): Այս հատվածը, ամենայն հա-

վանականությամբ, պեղել է Եսայի Ասատրյանը 1989-1990 թթ.[3]: Հորերին տվեցինք համապատասխան համարներ՝ N1, N2: Դրանցից N1 փոքր-ինչ ավելի խորն է, մյուսը՝ ավելի ծանծաղ. չափերն են՝ N1-117x153 սմ, խոր. 130 սմ, N2- 112x140 սմ, խոր. 110 սմ, (նկ. 5): N 2 հորի մեջ բացվել են ուշ շրջանում ներկառուցված թոնրի մնացորդներ, որոնք լուսանկարելուց եւ չափագրելուց հետո հեռացրեցինք՝ հորի մեջ առկա հողերը հանելու եւ ուսումնասիրելու նպատակով: Հորերը կիպ էին իրար՝ շուրթի հատվածում շարված ոչ մեծ, անմշակ բազալտ քարերով: Հորերի պատերը սվաղած էին կրով՝ անջրաթափանց դարձնելու նպատակով (հորերից մեկում՝ մինչեւ հինգ շերտ): Դա հավանաբար հորերի վերանորոգման աշխատանքների արդյունք է: Հորերն ունեին ոչ հստակ ուղղանկյուն կառուցվածք՝ հատակին արված փոսիկով՝ գինու նստվածքի համար: Հնձանների առագաստներն առայժմ տեսանելի չեն, եւ չի բացառվում, որ գտնվում են կենտրոնական հատվածում՝ սալահատակի տակ: N 2՝ փոքր հորից, գտնվեց տուֆ քարից պատրաստված շրջանաձեւ երկու կափարիչ: Դրանցից մեկը (չափերն են 40x42 սմ, հաստ. 6 սմ), պահպանվել է ամբողջությամբ, ունի բռնակ՝ 6 սմ բարձրությամբ: Երկրորդն առանց բռնակի է, 44x47 սմ չափերի, կոտրված, բայց ամբողջացող է: Այն ունի փոքր գոգավորություն: Երկու կափարիչներն էլ հնձանների մաս չեն կազմում եւ դրանց առկայությունը հորերում պատահական է:

B-3-4 քառակուսիներում բացվել են 60 սմ տրամագիծ ունեցող երկու թոնիր: Դրանք քայքայված վիճակում էին, պատերի պահպանված բարձրությունը 10-12 սմ: Այս հատվածներից հանված էին տուֆե սալահատակի որոշ քարեր եւ թոնիրները դրված էին հողի մեջ:

Պեղումներ կատարվեցին նաեւ հարավային, բարձր աշտարակի ներսում՝ իջնելով շուրջ 30 սմ, նախապես հեռացնելով շինարարական աղբը: Պարսպապատի հարավային մասում բացեցինք մոտ 50 սմ լայնությամբ խրամատ, որի արդյունքում եւ երեւաց պատի շարվածքը:

B-6 քառակուսում բացվեց 80 սմ բարձության, հյուսիս-հարավ ձգվող պատի մի հատված՝ շարված առանց շաղախի, կոպտատաշ, երկրորդ օգտագործման քարերով: Հարավային մասում այն միանում է պարսպապատին, իսկ հյուսիսային հատվածում ավերակված է: Պատի մյուս երեսը բացելու խնդրով սկսեցինք աշխատել C-6, D-6 քառակուսիներում: Այս քառակուսիները տարածվում էին պարսպի հարավային հատվածում, կիսաքանդ, բարձր աշտարակի դիմաց: Այստեղ մինչեւ 50 սմ խորությունից դեռ շինարարական աղբ էր դուրս գալիս: Մոտ 60 սմ խորության վրա երեւացին մոտ 2 մ լայնության, արեւելք-արեւմուտք ձգվող պատի հետքեր: Այս մասում խորացանք մինչեւ 1 մ, որի արդյունքում բացվեցին նոր պատեր՝ ձեւավորելով սենյակի նմանվող մի շինություն: Չի պեղվել միայն արեւմտյան պատը, քանզի այն դուրս էր մնում մեր պեղումների տարածքից: Հարավային մասում այն ձեւավորվում է կիսաբոլոր աշտարակի պարագծից առաջ դրված հենապատով, արեւելյան մասում՝ նոր բացված, անկանոն, չոր շարվածք

3 Տես **Ե. Ասատրյան**, Դաշտադեմ ամրոցի 1989 -1990 թթ. պեղումների արդյունքները, էջ 114:



Հատակագիծ

Նկ. 1



Նկ. 2

Նկ. 3

Նկ. 4

Նկ. 5

Նկ. 6

Նկ. 7

Նկ. 8

Նկ. 9

Նկ. 10

Նկ. 11

Նկ. 12

Նկ. 13

Նկ. 14

Նկ. 15

Նկ. 16ա

Նկ. 16բ

Նկ. 17

Նկ. 18

Նկ. 19

Նկ. 20

Նկ. 21

Նկ. 22

ունեցող պատով, իսկ հյուսիսային մասում՝ վերը նշված արեւելք-արեւմուտք ձգվող պատով (նկ. 7):

ԳՏԱԾՈՆԵՐ - Դաշտադեմի ամրոցի պեղումներից հայտնաբերված խեցեղենը թեեւ բազմաքանակ է, սակայն բեկորային վիճակում է: Մշակութային անխաթար շերտի չգոյության պայմաններում խեցեղենի թվագրությունը կատարվել է համեմատական նյութով[4], ըստ որի, դրանք թվագրվում են ԺԲ-ԺԳ. եւ ԺԴ-ԺԶ. դարերով:

Նախնական դիտարկումներով նյութերը կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝ հասարակ, ջնարակած եւ շինարարական խեցեղեն:

Հասարակ խեցեղենն ըստ գործառույթի բաժանվում է հետեւյալ խմբերի՝ կարասներ, կճուճներ, սափորներ, քրեղաններ, խուփեր, ճրագներ: Թեեւ գտածոները աչքի չեն ընկնում պատրաստման հմտությամբ եւ հարդարման շքեղությամբ, սակայն կարեւոր վկայություններ են վերոհիշյալ դարաշրջանների ամրոցաբնակների կենցաղի, ապրելակերպի վերաբերյալ:

Պեղումներից հայտնաբերված կարասները բեկորային են: Դրանք հիմնականում իրանների եւ շուրթերի հատվածներ են: Ուշագրավ է իրանի բեկորը, որը կրում է վերադիր ժապավենաձեւ գոտի: Մեկ այլ բեկոր հարդարված է սանրազարդով եւ մատնեքազարդով: Հայտնաբերվել են նաեւ կարմրափայլ կարասի իրանի եւ շուրթի բեկորներ, որոնցից առավել ուշագրավ է պսակին ալիքազարդ կրող շուրթի կարմրափայլ բեկորը (նկ.10):

Կճուճները հարթ հատակով, գնդաձեւ իրանով, դուրս փռվող շուրթով, մրապատ ելուստավոր կանթերով անոթներ են: Կանթերից մեկը կրում է փոքրագիր խաչապատկեր (նկ. 11):

Հատկապես մեծաքանակ են թասերի եւ քրեղանների բեկորները, որոնց շարքում առանձնանում են կարմրափայլ մակերեսով օրինակները (նկ.12):

Սափորների բեկորները, պատրաստված բարձորակ, մանրահատիկ կավից, ունեն կաթնագույն անգոբապատ մակերես:

Խուփերի եւ բռնակների բեկորները հար եւ նման են Հայաստանի զարգացած միջնադարյան այլ հուշարձաններից հայտնի օրինակներին (նկ.13):

Հայտնաբերվել է նաեւ մրապատ ձիթաճրագի մեկ օրինակ:

Գտածոների շարքում առանձնանում են երկու ծխամուրճերը, որոնցից մեկը գրեթե ամբողջական՝ պատրաստված մոխրագույն կավից (նկ.14): Երկրորդ օրինակը կարմրափայլ է, գրեթե ամբողջական, գլխիկը մրապատ է (նկ.15): Ջնարակած նյութերը թեեւ բեկորային են, սակայն հնարավոր է առանձնացնել ժամանակագրական երկու շրջան՝ ԺԲ-ԺԳ. եւ ԺԴ-ԺԶ. դարեր:

Առաջին ժամանակաշրջանին են վերաբերում դեղնականաչավուն երանգավորումով անոթի բեկորները, որոնք կրում են փոքրագիր եղանակով արված բուսական եւ երկ-

4 Հմմտ. **A. Kalantaryan, G. Karakhanyan, H. Melkonyan, H. Petrosyan, N. Hakobyan, F. Babayan, A. Zhamkochyan, K. Nawasardyan, A. Hayrapetyan**, *Armenia in the cultural context of East and West,* Yerevan, 2009:

բաչափական զարդեր (նկ. 16a/b): Երկրորդ շրջանին վերաբերող ջնարակած նյութերը աչքի են ընկնում պապրասպման ցածր որակով, հիմնականում առանց անգոբի են: Հախճապակե իրերի գրաածոները եզակի են:

Շինարարական խեցեղենի օրինակները մի քանիսն են, սակայն դրանց առկայությունը փաստում է այն մասին, որ ամրոցի տարածքում գտնվող եկեղեցին ունեցել է կղմինդրածածկ տանիք (նկ.17):

Ամրոցի պեղումներից հայտնաբերված մետաղե իրերը փոքրաթիվ են: Անխաթար մշակութային շերտ գրեթե չկա. այդ պայմաններում դրանց գտնվելը պատահական է, որը եւ հնարավորություն չի տալիս հստակ պատկերացում կազմելու շերտագրության եւ թվագրության մասին: Միջնաբերդի արեւմտյան պատի մոտ գտնվել է 25 սմ երկարության երկաթե իր (ենթադրում ենք նիզակ): Թեեւ այն ամբողջական է, բայց բավականին քայքայված է (նկ.18):

C-6 քառակուսուց գտնվեց 3,7 սմ տրամագիծ ունեցող բրոնզե կոճակ (հնարավոր է զրահազգեստի): Այն ունի փոքր զոգավորություն, մակերեսին՝ կենտրոնից ճառագայթաձեւ ձգվող գծազարդեր (նկ.19): Նույն հատվածից է նաեւ վարդյակազարդերով բրոնզե ապարանջանի բեկորը (նկ.20):

B-2 քառակուսուց գտնվեց 7,5 սմ տրամագիծ ունեցող հրանոթի գնդաձեւ արկ (նկ.21), որը հավանաբար վերաբերում է ամրոցի գոյության վերջին շրջանին՝ ԺԸ-ԺԹ. դարեր:

Գրաածոների թվում կան եւ քարե գործիքներ: Հայտնաբերվել է նաեւ սերդոլիկե ուլունք (նկ.22) եւ հարթ մակերոսով ապակե ապարանջանի բեկոր: